ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«22» մայիսի 2022 թվականի N 107-Լ

## ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 2/2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի մայիսի 10-ի «Հաշվեքննիչ պալատի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 2/2 որոշման.

1) Հավելվածի 41-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«41. Հաշվեքննության գործընթացում իրականացվում են հետևյալ գործողությունները՝

1) հաշվեքննության առարկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և հաշվեքննության նախապատրաստում,

2) հաշվեքննության առաջադրանքի նախագծի պատրաստում և հաստատում,

3) հաշվեքննության պլանի կազմում,

4) հաշվեքննության առարկայի վերաբերյալ ապացույցների ձեռքբերում և գնահատում,

5) հաշվեքննության արդյունքների արձանագրում,

6) ընթացիկ եզրակացության նախագծի պատրաստում և հաստատում,

7) օրենքով, սույն կանոնակարգով և Հաշվեքննիչ պալատի այլ ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործողություններ:»:

2) Հավելվածի 41-րդ կետից հետո լրացնել նոր կետեր հետևյալ բովանդակությամբ՝

«41.1. հաշվեքննության գործընթացը Հաշվեքննիչ պալատի կողմից սահմանված կարգով ենթակա է փաստաթղթավորման:

41.2. հաշվեքննության պլանը կազմվում է հաշվեքննության մեկնարկից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

41.3. հաշվեքննության գործընթացն իրականացվում է Հաշվեքննիչ պալատի հաստատած մեթոդաբանությունների և ուղեցույցների համաձայն, իսկ դրանցում տեղ չգտած կարգավորումների դեպքում, որպես կողմնորոշիչ չափանիշներ են հանդիսանում Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) հաստատած հիմնարար սկզբունքները, ստանդարտները և ուղեցույցները:»:

3) Հավելվածի 55-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝

«Ընդ որում, Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի առաջին մասում ընդգրկված ծրագրային կետի կատարման արդյունքում կազմված ընթացիկ եզրակացության նախագիծը ներկայացվում է Հաշվեքննիչ պալատի հաստատմանը հաշվեքննության առաջադրանքով նախատեսված հաշվեքննության կատարման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 10 օր առաջ, իսկ Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի երկրորդ մասում ընդգրկված ծրագրային կետի կատարման արդյունքում կազմված ընթացիկ եզրակացության նախագիծը ներկայացվում է Հաշվեքննիչ պալատի հաստատմանը հաշվեքննության առաջադրանքով նախատեսված հաշվեքննության կատարման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 30 օր առաջ:»:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ